նիս, Իլիճա, Կէղ՝ Մայիս 30ին կը հասնի Էրզրում ու հոն կը մնայ մինչև Յունիս 19 (Թղ. 65բ-67ա)։

Յունիս 19ին կը մեկնի Էրզրումէն. կը հանդիպի Տէվէպոյնի, Հասանղալայ և դաշտը, Քօփրուքոյ, Ջիմինղալասու, Թումատամի, Սօղանլի, Պաչճու պօղազ, Ղարսայ դաշտ, Սոկուգլու, Կարս, Եախնիթէփէ, Արփաչայ, Ղփչաղ, Ապարանի տակը և Յունիս 30ին Սաղմոսավանք, ուր կ'ողջունէ Եղիազար կաթողիկոսը։ Յուլիս 2ին կ'ելլէ Սաղմոսավանքէն ու հանդիպելով Մուղնի՝ կը մտնէ Էջմիածին (Թղ. 67ա-67բ)։

Յուլիս 2էն Նոյեմբեր 3 Էջմիածին, մերթ շրջակաները՝ Ուշի Ս. Սարգսի վանք, Սաղմոսավանք, Աշտարակ, Ուշական, Օհանավանք, Զօրագեղ, Երևան, Կողեռն, Անապատ, Կօկքումպէթ (Թղ. 67ա - 72ա)։

Նոյեմբեր 3ին առաջնորդական պաշտօնով կ'ուղևորի Էջմիածնէն Եւդոկիա. կը հանդիպի Սևջուր, Շարիար, Երասխ գետ (անցք), Գումպէթի սինօռը, Թէլլիպուռուն, Քերցու դէմն, Գումպէթ, Օրթաեօլ, Պաչեօլ, Արաֆխանայ, Ղալըխլու, Ջիթահանք սար, Առուճագրակ, Գոմաձոր, Էգէպատ և Նոյեմբեր 14ին կը հասնի Էրզրում, ու հոն կը մնայ մինչև Դեկտ. 24 (Թղ. 72ա - 74ա)։

Դեկտ. 24ին կը մեկնի Էրզրումէն և հանդիպելով Իլիճա, Ճինիս, Աշխալայ, Թօփալչաւուշ, Շօղանուխան, Զաւուշքօյի, Լօռի, Սօքմէն, Սարըճալար, Ղուզղունղայասի, Փիրտելի, Զաղփայ, Քրթանոս, Անդրիասի, Հաճիմուրատ ղալասի, Մուստասուն, Եօղունփէլիտ, Ղատի քօփրուսի, Ալմուսս, **1686** Յունուար 10ին կը հասնի Թօխաթ (Թղ. 74ա - 75ա)։

Յունուար 10էն **1688** Յունուար 21՝ երկու տարի կը մնայ Եւդոկիա։ Այդ ժամանակամիջոցին երբեմն կ'այցելէ Թեմերը ու կը հանդիպի Ս. Սարգիս, Ս. Պարսամ, Ս. Ստեփանոս, Պազարճուխ, Անտեղ, Սալութպէլ, Ղարալար, Ջիլէ, Էյնէպազար, Կուրճիգեղ, Երիցանց, Ալէմշէ, ևն. (Թղ. 75ա - 102ա)։

Յունուար 21ին կը մեկնի Եւդոկիայէն դէպի Էջմիածին. կը հանդիպի՝ Ալմուսս, Ղօյլասար, Սըսոյ վանք, Ս. Առաքեալ վանք, Անդրիասի, Մշակնոց, Թուրքմանքօյ, Քրթանոս, Զաղափա, Ղուզղունղայասի, Սառուճալար, Կարմրի, Սօքմէն, Ղարաղուլախ, Շօղայենու խան, Աշխալա, Փաշաեօլու, Իլիճա, և Փետր. 10ին՝ Էրզրում ու հոն կը մնայ մինչև Մարտ 2 (Թղ. 102ա - 103բ)։

Մարտ 2ին կը մեկնի Էրզրումէն ու հանդիպելով Դու գիւղ,